ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «27» փետրվարի 2026 թ.

ՈՐՈՇՈՒՄ N 15-Ա

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 12-րդ կետով և հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 9-ի N 440-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները՝ հայտատուների կողմից ներկայացված հայտերը և դրանց կից ներկայացված փաստաթղթերը Հավելվածի սահմանված չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար հետևյալ հայտատուների կողմից ներկայացված հայտերը՝

1) հայտատու ֆիզիկական անձ Համբարձում Դալլաքյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտատու ֆիզիկական անձ Համբարձում Դալլաքյանի կողմից չեն ներկայացվել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար անհրաժեշտ հիմքեր և հիմնավորումներ, մասնավորապես՝ Հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ ՀՀ որևէ

համայնքում կամ մարզում կառավարությանը ենթակա մարմնի համապատասխան օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում գործունեություն ծավալելու, տվյալ ոլորտի առնվազն երկու տարվա մասնագիտական փորձառություն ունենալու վերաբերյալ,

2) հայտատու իրավաբանական անձ «Անշարժ գույքի գործակալությունների ասոցիացիա» ՀԿ-ի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտատու իրավաբանական անձ «Անշարժ գույքի գործակալությունների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից չեն ներկայացվել հիմքեր և հիմնավորումներ Հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ կառավարությանը ենթակա մարմնի համապատասխան օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում գործունեություն ծավալելու վերաբերյալ: Նշվածի համատեքստում հարկ է ընդգծել, որ ռիելթորական գործունեությունը դեռևս չի համարվում Կոմիտեի գործունեության հիմնական ոլորտ («Ռիելթորական գործունեության մասին» օրենքն ամբողջությամբ ուժի մեջ է մտնելու 2027 թվականի հունիսի 1-ից), հետևաբար տվյալ ոլորտում ներկայացված մասնագիտական փորձառությունը չի ներառվում Կոմիտեի օրենսդրությամբ նախատեսված հիմնական գործունեության ոլորտում:

2/27/2026

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393